ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/70

ք. Երևան «25» 11 2019 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Նաիրի Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հերմես» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Գ. Եղիազարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 6 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2377000 (երկու միլիոն երեք հարյուր յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման

ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011028785 ՀՎՀՀ 02698732	«Հերմես» ՍՊԸ Ք.Արտաշատ Մարքսի6/27 -ԱՇԲ Արտաշատ մ/ճՀ/Հ 2479917754500000 ՀՎՀՀ04203305
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____Ն. Հարությունյան (ստորագրություն) Կ.Տ.	_____Գ. Եղիազարյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« 25 » « 11 » 2019թ. կնքված
ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/70 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հոդվածի N	Գումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատուցման ժամկետը*
1	71241200/8	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	Նախատեսվում է իրականացնել ՀՀ Երևան, «Լոռեցի Սաքո» քանդակի վերականգնման (ըստ հիմնավորման՝ տեղափոխման) և տարածքի բարեկարգման գիտնախագծանախագծային և նախահաշվային փաստաթղթերի կազմում համաձայն՝ Աղյուսակ N 1-ի (Վավերագրում և ուսումնասիրում կատարելու համար ներկայացվող պահանջներ) և Աղյուսակ N 2-ի (Նախագծի պատրաստում, ծախսերի գնահատում կատարելու համար ներկայացվող պահանջներ):	դրամ	2377000	1	Սույն թվականի դեկտեմբեր 16, սակայն ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում

ԱՂՅՈՒՍԱԿ N 1՝ Վավերագրում և ուսումնասիրում կատարելու համար ներկայացվող պահանջները:

	Ծառայության կատարման պահանջներ						
	անվանումը	նկարագրությունը	Մասնագիտական	Որակական	Համաձայնեցում	Մատուցման ձևաչափը	Մատուցման ժամկետն
	1	2	3	4	5	6	7
				Վավերագրում			
1	Մատենագրական և արխիվային աղբյուրներից նյութերի հավաքում	ուսումնասիրել և վերլուծել հեղինակի արվեստը, ստեղծագործական մոտեցումներն ու առանձնահատկությունները	մասնագիտական խումբ՝ ճարտարապետ, քանդակագործ ճարտարագետ-կոնստրուկտոր	խնդիրների լուսաբանմանը նպաստող, վերլուծությունների և տեղեկությունների դասակարգում	չի պահանջվում	արդյունքները ներկայացնել 1 էլեկտրոնային և երկու թղթային տարբերակով, ալբոմի տեսքով	Նոյեմբեր 25, սակայն ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է
2	վավերագրում /չափագրություն, լուսանկարներ,/	ամբողջական չափագրություն /մետրային և ըստ անհրաժեշտության՝ տախոմետրիկ		ընթեռնելի մասշտաբով, բոլոր հիմնական տարբերակումների և չափերի տեղադրմամբ, անհրաժեշտության	կցել տեխնիկական վիճակի մասին ակտին		

		եղանակով, ֆոտոգրամետրիկ տվյալներով/, առկա քայքայումների և վնասների հստակ տեղադրում, դասակարգում և ներկայացում չափագրությունների վրա		դեպքում՝ եռաչափ մոդելավորմամբ			ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում
	Ուսումնասիրություններ (այդ թվում ճարտարագիտական)						
3	կոնստրուկտորական	հետազննություն և եզրակացություն կառուցվածքի առկա վիճակի վերաբերյալ	ճարտարագետ-կոնստրուկտոր	ըստ օրենսդրական և նորմատիվ պահանջների՝ վերլուծություն, եզրակացություն	չի պահանջվում	արդյունքները ներկայացնել 1 էլեկտրոնային և 2 թղթային տարբերակով, ալբոմի տեսքով	Նոյեմբեր 25, սակայն ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում
	նյութագիտական	կառուցվածքում կիրառված նյութերի ուսումնասիրություն և եզրակացություն	նյութագետ				
4	տեխնիկական վիճակի մասին ակտի կազմում	ուսումնասիրությունների համադրմամբ վիճակի (առկա խնդիրների) գնահատում՝ կցելով փաստագրական նյութերը	մասնագիտական խմբով /1-2 կետերով պահնջվող մասնագետների մասնակցությամբ/	ազատ ձևաչափով, ներկայացնելով բոլոր խնդիրները	չի պահանջվում		
5	նախագծային առաջադրանքի կազմում	տեխնիկական վիճակի մասին ակտի տվյալների հիման վրա՝ նախատեսվող պահանջների ամրագրում	հեղինակ՝ համադրելով եզրակացությունները և ամփոփելով ուսումնասիրություններ	համաձայն կցված առաջադրանքի ձևանմուշի	համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ		

ԱՂՅՈՒՍԱԿ N 2՝ Նախագծի պատրաստում, ծախսերի գնահատում կատարելու համար ներկայացվող պահանջները՝

Ծառայության կատարման պահանջներ

Անվանումը	Նկարագրությունը	Մասնագիտական	Որակական	Համաձայնեցում	Մատուցման ձևաչափը	Մատուցման ժամկետը
1	2	3	4	5	6	
1-ին (էսքիզային) փուլ						

էսքիզային նախագիծ	ըստ հիմնավորման՝ քանդակի համար նոր տարածքի ընտրություն և վերլուծություն համալիր հետազոտությունների արդյունքների հաշվետվության հիման վրա և հնարավոր տարբեր մեթոդների վերլուծությամբ՝ նախագծային լուծումների ընտրություն մանրակերտ	հեղինակ, մասնագիտական աշխատանքային խումբ	գծագրական մասը՝ ընթեռնելի մասշտաբով, հիմնական չափերի տեղադրմամբ, հաշվետվության և հիմնավորումների՝հստակ ներկայացում	սահմանված կարգով համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ (այդ թվում՝ գիտամեթոդական խորհրդի քննարկման) համաձայնեցնել հեղինակային իրավունքի ժառանգորդի հետ	ներկայացնել 1 էլեկտրոնային և 2 թղթային տարբերակով, ալբոմի տեսքով, մանրակերտի լուսանկարներ	Նոյեմբեր 25, սակայն ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում
իրականացման աշխատանքների կազմակերպման հիմնադրույթներ	նախատեսել ծավալների իրականացման, կազմակերպման դրույթները և հերթականությունն ըստ ամիսների	հեղինակ, մասնագիտական աշխատանքային խումբ	ըստ նորմատիվ պահանջների			
2-րդ (աշխատանքային նախագծի մշակման) փուլ						
արվեստաբանական մաս /համաձայն հաստատված էսքիզի/ ճարտարապետական մաս /համաձայն հաստատված էսքիզի/ կոնստրուկտորական մաս /համաձայն հաստատված էսքիզի/	մանրակերտի ու վերականգման տեխնոլոգիայի մշակում, ճարտարապետական, կոնստրուկտորական ու աշխատանքների կազմակերպման նախագիծ, լանդշաֆտի նախագծում՝ ուղղաձիգ հատակագծմամբ	հեղինակ, մասնագիտական աշխատանքային խումբ	ըստ նորմատիվ պահանջների՝ գծագրական մասը ընթեռնելի մասշտաբով, չափերի տեղադրմամբ, բացատրագիր (յուրաքանչյուր միջամտության ձևի վերաբերյալ), ժամանակացույց	սահմանված կարգով համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ համաձայնեցնել հեղինակային իրավունքի ժառանգորդի հետ	ներկայացնել 1 էլեկտրոնային և 4 թղթային տարբերակով, ալբոմի տեսքով նաև 1 էլեկտրոնային և 1 թղթային տարբերակով, ալբոմի տեսքով՝ ուռուսերեն լեզվով	Դեկտեմբեր 16, սակայն ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում
նախահաշվային մաս	ֆինանսական գնահատում << դրամով	կազմել Microsoft Excel ծրագրով, բանաձևերի կիրառմամբ, GHEA Grapalat տառատեսակով	ըստ նորմատիվ պահանջների /ծավալաթերթ և նախահաշիվ/		ներկայացնել 1 էլեկտրոնային և 4 թղթային տարբերակով, ալբոմի տեսքով նաև 1 էլեկտրոնային և 1 թղթային տարբերակով, ալբոմի տեսքով՝ ուռուսերեն լեզվով	Դեկտեմբեր 16, սակայն ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ

						այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում

Առդիր նյութեր և տվյալներ

	Անվանումը	էջերի քանակը	Ծանոթություն
1	Վկայագիր	-	ծանոթանալ ՀՀ ԿԳՄՍՆ ՊՄՀՊ գործակալությունում
2	Պահպանական գոտի	-	ծանոթանալ ՀՀ ԿԳՄՍՆ ՊՄՀՊ գործակալությունում
3	Առաջադրանքի ձևանմուշ	-	ծանոթանալ ՀՀ ԿԳՄՍՆ ՊՄՀՊ գործակալությունում

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Ն. Հարությունյան

ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- Գ. Եղիազարյան

/ստորագրություն/Կ.Տ

Հավելված N 2
« 25 » « 11 » 2019թ. կնքված
ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/70 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում			
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր մինչև 30-ը	Ընդամենը
1	71241200/8	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում		2377000	2377000	2377000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Ն. Հարությունյան
ստորագրություն/Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- Գ. Եղիազարյան
/ստորագրություն/Կ.Տ